ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ը

14.02.2014 թվականի N.15-Ն

2014թ. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՎԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆՑ ԱՆԽԱՓԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2014թ. գարնանային վարարումների ժամանակ էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրակայանների հիդրոտեխնիկական կառույցներով հորդաջրերի բացթողումը, էլեկտրատեղակայանքների, անավարտ և ժամանակավոր կառույցների, էներգետիկայի բնագավառի կարևորագույն այլ օբյեկտների պաշտպանությունը, նրանց անխափան աշխատանքն ապահովելու նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Ստեղծել կենտրոնական հանձնաժողով հետևյալ կազմով՝

Լ. Ծախվերդյան	- Նախարարի տեղակալ (նախագահ),
Զ. Գրիգորյան	- Էներգետիկայի պետական տեսչության պետ (նախագահի տեղակալ),
Ա. Գրիգորյան	- Էներգետիկայի պետական տեսչության վերլուծության, վիճակագրության և շահագործման համակարգման բաժնի պետ,
Գ. Բալյան	- <Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր> ՓԲԸ գլխավոր ճարտարագետ,
Ս. Իգիթբաշյան	- <Բարձրավոլտ էլեկտրացանցեր> (<ԲԷՑ>) ՓԲԸ գլխավոր ճարտարագետ
Ռ. Խաչատրյան	- <<Հայաստանի էլեկտրական ցանցեր> (<<ՀԷՑ>) ՓԲԸ գլխավոր ճարտարագետ
Հ. Սարգսյան	- <Միջազգային էներգետիկ կորպորացիա> (<ՄԷԿ>) ՓԲԸ արտադրության գծով տնօրեն (համաձայնությամբ),
Գ. Մկրտչյան	- <Որոտանի ՀԷԿՀ> ՓԲԸ գլխավոր ճարտարագետ,
Հ. Թադևոսյան	- <<ՀայՌուսգազարդ> ՓԲԸ-ի գլխավոր ճարտարագետ (համաձայնությամբ),,
Ս. Երիցյան	-<<ՀայՌուսգազարդ> ՓԲԸ-ի <<Հրազդան-5-ի շինարարության տնօրինություն> հիմնարկի գլխավոր ճարտարագետ (համաձայնությամբ),:

2. <Երևանի ՋԷԿ>, <Որոտանի ՀԷԿՀ>, <Բարձրավոլտ էլեկտրացանցեր> ՓԲԸ գլխավոր տնօրեններին՝

2.1. մինչև 2014թ. մարտի 10-ը ստեղծել հակավարարումային հանձնաժողովներ, գլխավոր ճարտարագետների կամ շահագործման գծով փոխտնօրենների նախագահությամբ, այդ աշխատանքների մեջ ներգրավելով փորձառու, առաջատար մասնագետների,

2.2. մշակել և հաստատել հակավարարումային միջոցառումների պլան և ապահովել դրանց ժամանակին կատարումը,

2.3. պատրաստականության վիճակի բերել ջրընդունիչ և ջրթող հիդրոտեխնիկական կառույցները, ջրահեռացման միջոցները, հեղեղատարները, լանջառները, կողմնատար առուները, պոմպային համակարգերը և այլն,

2.4. մինչև վարարումը, ջրածածկվող տարածքից հեռացնել սարքավորումները, մեխանիզմները, նյութերը և այլ ունեցվածքը,

2.5. վթարային վերականգնողական աշխատանքներ կատարելու համար նախապատրաստել անհրաժեշտ քանակությամբ մեխանիզմներ, ավտոտրանսպորտ, բրիգադներ,

2.6. ապահովել վարարումների անցման հիդրոլոգիական կանխատեսումների ժամանակին ստացումը և հանձնումը ենթակա օբյեկտներին,

2.7. վարարումների ժամանակ սահմանել շուրջօրյա հերթապահություն:

3. Կենտրոնական հանձնաժողովին (Լ. Շահվերդյան)՝ էներգահամակարգի անվտանգ և հուսալի շահագործման նպատակով առաջարկել.

ա) <ՀԱԷԿ>, <ՀայՌուսգազարդ>, <ՄԷԿ>, <ՀԷՑ> ՓԲ ընկերություններին և <ՀայՌուսգազարդ> ՓԲԸ-ի <Հրազդան-5-ի շինարարության տնօրինություն> հիմնարկին՝ իրականացնել սույն հրամանի 2-րդ կետի ենթակետերով նախատեսված միջոցառումները,

բ) <ՄԷԿ> ՓԲԸ՝ մշակել ընկերության աշխատանքային ռեժիմները և համաձայնեցնել <Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր> ՓԲԸ հետ:

4. <Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր> ՓԲ ընկերությանը (Մ. Մնացականյան)՝ վարարումների ժամանակաշրջանում, համակարգի ռեժիմներն իրականացնելիս, խստորեն ղեկավարվել հիդրոտեխնիկական կառույցների աշխատանքները կանոնակարգող նորմատիվ փաստաթղթերով:

5. Տեղական հակավարարումային հանձնաժողովների նախագահներին՝ պարբերաբար տեղեկացնել կենտրոնական հանձնաժողովին հակավարարումային միջոցառումների կատարման ընթացքի մասին:

6. Կենտրոնական հանձնաժողովին (Լ. Շահվերդյան)՝ կոորդինացնել ընկերությունների հանձնաժողովների աշխատանքները և կատարված միջոցառումների մասին պարբերաբար զեկուցել ինձ:

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ